ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետություն պետական պաշտոնական այցով ժամանած Մոհամմադ Խաթամին սեպտեմբերի 9-ին այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր բարձրաստիճան հյուրին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահը, շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության համար, անդրադարձավ երկու երկրների հարաբերություններին և դրանց զարգացման հեռանկարներին:

«Այցելությունն այս սրբավայր Էլ ավելի իմաստավորեց Հայաստանի Հանրապետություն մեր այցը»,- իր խոսքում նշեց Մոհամմադ Խաթամին:

«Ինչպես աշխարհասփյուռ մեր բոլոր հայորդիները, այնպես էլ Իրանում ապրող մեր ժողովրդի զավակները խաչակնքելիս միշտ իրենց հայացքը դարձրել են դեպի Սուրբ Էջմիածինը»,- նշեց Նորին Սրբությունը՝ անդրադառնալով իր զավակների կյանքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելությանը և շեշտելով դարերի ընթացքում Իրանի իշխանությունների բարեխնամ վերաբերմունքը Մայր Աթոռի հանդեպ: Հայոց Հայրապետն իր ուրախությունը հայտնեց, որ Իրանի հետ Հայաստանի հարաբերությունները նոր զարգացում և առաջընթաց են ապրում՝ մաղթելով, որ այս այցելությամբ դրանք Էլ ավելի ամրապնդվեն և զորանան՝ ի փառս Աստծո և ի բարօրություն մեր երկու բարեկամ ժողովուրդների:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց այն ուշադրության և հոգատարության համար, որ Իրանի իշխանությունները հարյուրամյակներ շարունակ դրսևորել են հայ համայնքի հանդեպ՝ հնարավորություն ընձեռելով, որ այն ազատորեն ապրի իր ազգային-մշակութային ու հոգևոր կյանքով:

Հանդիպման ընթացքում կարևորվեց նաև հոգևոր առաջնորդների դերն ու առաքելությունը փարաձաշրջանի խնդիրների լուծման գործում:

Հանդիպմանը ներկա էին Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Աղամյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը, Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյանը, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանը, Իրանի Իսլամական Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գ. Ղարիբջանյանը, Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ա. Հաղիղյանը և այլ պաշտոնատար անձինք:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ